

ԳԼՈՒԽ 5

Կառավարության հարկային քաղաքականությունը և առևտուրը

Արտաքին առևտուրը պայմանավորող երկու հիմնարար գործոններն են երկրների տարբերությունը և ծավալի էֆեկտը:

Երկրների տարբերությունը դրսևորվում է արտադրողականության, ռեսուրսներով օժտվածության, սպառման նախապատվությունների տարբերություններում, ինչպես նաև հարկման ու լրավճարների տրամադրման քաղաքականության տարբերությունում:

Արտաքին առևտուրը պայմանավորվում է հարկերով ու լրավճարներով, քանի որ դրանք ազդում են արտադրության ծախսերի և հետևաբար՝ թողարկման ու առևտրի վրա:

Հարկերի ու լրավճարների ազդեցությունը պարզելու համար նախ շեղոքացնենք մնացյալ գործոնների ազդեցությունը: Համարենք՝ ունենք երկու երկիր, որոնցում տեխնոլոգիան, ռեսուրսներով օժտվածությունը և նախապատվությունները նույնն են, ծավալի էֆեկտը հաստատուն է, շուկաները կատարյալ մրցակցային են, և ազատ առևտրի հավասարակշռությունը համընկնում է ավտարկիայի հավասարակշռությանը: Դրանով իսկ, երկրները սկզբնապես արտաքին առևտրի շարժառիթ չունեն:

Հավասարակշռությունը ավտարկիայում

Հարկերի և կամ լրավճարների առկայության դեպքում ապրանքի գինը սպառողի և արտադրողի համար տարբեր են: Նշանակենք՝

p – ապրանքի գինը արտադրողի համար, որը նա ստանում է ապրանքը մատակարարելու դիմաց՝ հարկերը վճարելուց հետո,

q – ապրանքի գինը սպառողի համար, որը նա վճարում է ապրանքը ձեռք բերելու համար,

p^{*} – միջազգային գինը:

Համարենք՝ կառավարությունը հարկերն ամբողջությամբ հետ է վերադարձնում սպառողներին, ընդ որում՝ միանվագ վճարի միջոցով (նմանապես՝ կառավարությունը լրավճարները ֆինանսավորում է միանվագ հարկի միջոցով):

Սահմանենք, որ միանվագ է այն վճարը կամ հարկը, որի դեպքում վճար ստացողը կամ հարկ վճարողը չեն կարող իրենց վարքը փոխելու միջոցով ազդել ստացվող կամ կատարվող վճարի մեծության վրա: Միլթոն Ֆրիդմանի պատկերավոր համեմատությամբ՝ սպառողներին հարկի միանվագ վերադարձը կարող ենք պատկերացնել իբրև ուղղաթիռից դրամանիշերի նետում: Նետված դրամանիշերն արագորեն հավաքվում են ոմանց կողմից, ընդ որում նախապես հայտնի չէ, թե ո՞վ կկարողանա հավաքել, և կամ յուրաքանչյուրը որքա՞ն կկարողանա հավաքել: Բացի այդ՝ յուրաքանչյուրը համոզված է, որ դա մեկանգամյա իրադարձություն է, որն այլևս երբեք չի կրկնվի (ու ամբողջ օրը բերանը բաց, հայացքը երկնքին հառած չի սպասում ինքնաթիռի հաջորդ թռիչքին):

Ֆրիդմանի ինքնաթիռի դեպքում ստացվում է, որ հարկն ապրանքի գինը սպառողների համար բարձրացնում է, թեպետ հարկի գումարը սպառողներին ամբողջությամբ հետ է վերադարձվում:

Հարկի կամ լրավճարի դեպքում սպառողի և արտադրողի գների միջև կապը հետևյալն է.

(1) $q = p(1 + t) > p$ հարկի դեպքում

(2) $q = p(1 - s) < p$ լրավճարի դեպքում

որտեղ t հարկի, իսկ s լրավճարի դրույքն է: Այսինքն՝ հարկի դեպքում սպառողի գինը գերազանցում է արտադրողի գնին, իսկ լրավճարի դեպքում՝ հակառակը:

Հարաբերական գնի վրա ազդեցություն տեսանկյունից մի ապրանքի վրա հարկ սահմանելը համարժեք է մյուս ապրանքի համար լրավճար տրամադրելուն.

(3) $\frac{q_x}{q_y} = \frac{p_x}{p_y(1 + t)} < \frac{p_x}{p_y}$ հարկ y ապրանքի վրա

(4) $\frac{q_x}{q_y} = \frac{p_x(1 - s)}{p_y} < \frac{p_x}{p_y}$ լրավճար x ապրանքի համար

Ընդ որում, ցանկացած t -ի համար գոյություն ունի s -ի այնպիսի մեծություն, որ.

$$\frac{p_x}{p_y(1 + t)} = \frac{p_x(1 - s)}{p_y}$$

Գծ. 1-ում Q ավտարկիայի հավասարակշռությունն է նախքան հարկ սահմանելը կամ լրավճար տրամադրելը: Այն ստացվում է երկրի արտադրական հնարավորությունների սահմանի և հասարակության անտարբերության կորի շոշափման կետում: Կասենք՝ Q շահճատված հավասարակշռության կետն է: Այն արտահայտում է ավտարկիայի և՛ սպառումը, և՛ արտադրությունը:

E , նույնպես, ավտարկիայի հավասարակշռության կետ է, բայց y -ի վրա հարկ սահմանելուց կամ x -ի համար լրավճար տրամադրելուց հետո: Կասենք՝ E աղճատված հավասարակշռության կետն է: Չնայած աղճատմանը՝ E կետը, նույնպես, արտահայտում է ավտարկիայի և՛ սպառումը, և՛ արտադրությունը, քանի որ հարկն ամբողջովին հետ է վերադարձվում միանվագ վճարով, իսկ լրավճարը ֆինանսավորվում է միանվագ հարկով:

Այսպիսով՝ հարկի հետևանքով սպառողները վճարում են ավելի, քան արտադրողները ստանում են, բայց տարբերությունը հետ է վերադարձվում սպառողներին:

Այսպես՝ նշանակենք c և p ինդեքսներով համապատասխանաբար սպառման և արտադրության քանակները: y -ի վրա հարկ սահմանելու դեպքում ունենք.

(5) $\underbrace{q_x x_c + q_y y_c}_{\text{սպառման արժեք սպառողների գներով}} = \underbrace{p_x x_p + p_y(1 + t)y_p}_{\text{արտադրության արժեք արտադրողների գներով}} = [p_x x_p + p_y y_p] + [p_y t y_p]$

Հվ. 5-ի ձախ կողմը սպառողների ծախսն է, աջ կողմի առաջին փակագիծը արտադրողների ստացած հասույթն է, երկրորդ փակագիծը հարկն է, որը փոխանցվում է սպառողներին:


Դրանով իսկ՝ սպառողների ծախսը հավասար է սպառողների եկամտին (համարում ենք, որ տնային տնտեսությունները (սպառողներ) արտադրողների սեփականատերերն են, իսկ կառավարությունն արտադրություն կամ սպառում չի իրականացնում):

Գծ. 1-ում նկարագրված է y -ի վրա հարկ սահմանելու կամ x -ի համար լրավճար տրամադրելու ազդեցությունը: Հասարակության բարեկեցությունը E կետում ավելի ցածր է, քան Q -ում: Հավասարակշռության կետում արտադրողի հարաբերական գնի p_x/p_y ուղիղը շոշափում է արտադրական հնարավորությունների սահմանը, իսկ սպառողի հարաբերական գնի q_x/q_y ուղիղը շոշափում է անտարբերության կորը: Հարկի դեպքում y ապրանքի գինը սպառողների համար ավելի բարձր է, քան արտադրության ծախսն է, իսկ լրավճարի դեպքում x ապրանքը սպառողների համար ավելի էժան է, քան արտադրության ծախսն է:

Գծանկար 1

y -ի վրա հարկ (x -ի համար լրավճար) սահմանելու դեպքում ավտարկիայի հավասարակշռությունը Q -ից տեղաշարժվում է E :

Q կետում $\frac{q_x}{q_y} = \frac{p_x}{p_y}$;
 E կետում $\frac{q_x}{q_y} < \frac{p_x}{p_y}$;



Ասվածից չի հետևում, թե հարկերը կամ լրավճարները անհրաժեշտաբար կրճատում են բարեկեցությունը: Հարկերի միջոցով է կառավարությունն ապահովում հանրային բարիքների արտադրությունը: Բացի այդ, եթե x -ի և y -ի վրա հավասար հարկ սահմանվի, ապա սպառողի և արտադրողի հարաբերական գները կլինեն իրար հավասար, և նկարագրված աղճատող ազդեցությունը չի լինի:

Բացի այդ, կառավարության հարկերը (լրավճարները) երբեմն առկա աղճատումները վերացնելու նպատակով են սահմանվում (տրամադրվում): Այսպես, եթե հարկը, կրճատելով տվյալ ապրանքի արտադրությունը և սպառումը, նվազեցնում է շրջակա միջավայրի՝ կյանքի համար վնասակար աղտոտումը, ապա բարեկեցությունն աճում է, ոչ թե նվազում:

Հավասարակշռությունը փոքր բաց տնտեսությունում

Համարենք՝ Ա երկիրը փոքր է. միջազգային գները նրա համար տրված են: Համարենք նաև՝ միջազգային հարաբերական գինը հավասար է Ա երկրի ավտարկիայի հարաբերական գնին.

(6) $\frac{p_x}{p_y} = \frac{p_x^*}{p_y^*}$

Նման իրավիճակում Ա երկիրն առևտուր անելու շարժառիթ չունի (հիշենք, որ ըստ մեր նախապայմանի, ազատ առևտրի հավասարակշռությունը համընկնում է ավտարկիայի հավասարակշռությանը): Գծ. 2-ում Q -ն և՛ ազատ առևտրի, և՛ ավտարկիայի հավասարակշռ. կետն է:

Բաց տնտեսությունում հարկի (կամ լրավճարի) ազդեցությունը՝ կախված նրանից՝ արտադրողի, թե սպառողի համար է սահմանված, էապես տարբեր է: Փակ տնտեսությունում այդ ազդեցությունը նույնն է, քանի որ յուրաքանչյուր ապրանքի արտադրությունն անհրաժեշտաբար հավասար է սպառմանը:

Սպառման հարկը գանձվում է և՛ տեղական արտադրության, և՛ ներմուծված ապրանքների սպառման համար: Իսկ եթե ապրանքն արտահանվում է, ապա սպառման հարկը վճարվում է

տեղական արտադրության միայն շարտահանվող մասի համար: y -ի վրա սպառման հարկի դեպքում սպառողի, արտադրողի և համաշխարհային գների միջև կապը հետևյալն է.


$$(7) \quad \frac{q_x}{q_y} = \frac{p_x}{p_y(1+t)} = \frac{p_x^*}{p_y^*(1+t)} \Rightarrow (1+t) \frac{q_x}{q_y} = \frac{p_x}{p_y} = \frac{p_x^*}{p_y^*} > \frac{q_x}{q_y}$$

Այսինքն՝ արտադրողի հարաբերական գինը հավասար է միջազգային հարաբերական գնին:

y -ի սպառման վրա հարկի ազդեցությունը ցույց է տրված գծ. 2-ում: Հարկի սահմանումից հետո արտադրողները շարունակում են արտադրել Q -ում, քանի որ միջազգային հարաբերական գնի ուղիղը, որի թեքությունը հավասար է արտադրողի հարաբերական գնի թեքությանը, այդ կետում է շոշափում է արտադրական հնարավորությունների սահմանը: Իսկ սպառման կետը գտնվում է միջազգային հարաբերական գնի ուղիղի վրա, բայց այն կետում, որում սպառողի հարաբերական գնի ուղիղը շոշափում է անտարբերության կորը: Գծ. 2-ում դա C կետն է:

Գծանկար 2

Սպառման հարկը կամ լրավճարը փոքր բաց տնտեսությունում



Այսպիսով՝ սպառման հարկն արտադրության վրա չի ազդում (այն նախկինի պես Q կետում է), սակայն կրճատում է y -ի սպառումը՝ ընդլայնելով x -ինը: Սպառողներն ավելի թանկ ապրանքը փոխարինում են ավելի էժան ապրանքով: Գծ. 2-ից հետևում է, որ սպառման հարկի դեպքում ընդհանուր բարեկեցությունը նվազում է, քանի որ սպառման նոր կետը գտնվում է ավելի ցածր անտարբերության կորի վրա: Սակայն պարտադիր չէ, որ բարեկեցությունը նվազի. բենզինի սպառման վրա հարկ սահմանելու դեպքում միջավայրի աղտոտումը նվազում է, և բարեկեցությունն աճում է:

Այժմ դիտարկենք y -ի արտադրության հարկի, նույնն է՝ x -ի արտադրության լրավճարի ազդեցությունը (գծ. 3): Այս դեպքում սպառողի, ոչ թե արտադրողի հարաբերական գնին է հավասար միջազգային հարաբերական գնին.

$$(8) \quad \frac{p_x}{p_y(1+t)} = \frac{q_x}{q_y} = \frac{p_x^*}{p_y^*} < \frac{p_x}{p_y}$$


Գծ. 3-ում հարկի (լրավճարի) սահմանումից հետո արտադրությունը տեղաշարժվում է M կետ, քանի որ արտադրողի հարաբերական գնի ուղիղն այդ կետում է շոշափում արտադրական հնարավորությունների սահմանը: Սպառումն իրականացվում է M կետով տարված միջազգային հարաբերական գնի ուղիղի վրա՝ C կետում, որում միջազգային հարաբերական գնի ուղիղը, որի թեքությունը հավասար է սպառողի հարաբերական գնի ուղիղի թեքությանը, շոշափում է հասարակության անտարբերության կորը:

Այսպիսով՝ արտադրության հարկը կրճատում է y -ի արտադրությունը և ընդլայնում է x -ի արտադրությունը:

Արտադրության և սպառման հարկերը (կամ լրավճարները) առևտրի վրա տրամագծորեն տարբեր ազդեցություն են թողնում: y -ի սպառման հարկը կրճատում է y -ի տեղական սպառումը և հետևաբար՝ նպաստում է y -ի արտահանման աճին: Իսկ y -ի արտադրության հարկը կրճատում է y -ի տեղական արտադրությունը և հետևաբար՝ նպաստում է y -ի ներմուծման աճին:

Գծանկար 3

Արտադրության հարկը կամ լրավճարը փոքր բաց տնտեսությունում




Առևտուրը երկու միանման, բայց տարբեր քաղաքականություն իրագործող երկրների միջև

Ունենք երկու միանման երկրներ՝ Ա և Բ: Գծ. 1-ում Q կետը միաժամանակ երկու երկրների համար նկարագրում է ազատ առևտրի և ավտարկիայի հավասարակշռությունները: Սկզբում արտաքին առևտրի շարժառիթ չկա:

Այնուհետև Ա երկիրը սահմանում է y -ի սպառման հարկ (կամ x -ի սպառման լրավճար): Առկա միջազգային հարաբերական գնի դեպքում Բ երկիրը կշարունակի արտադրել և սպառել Q կետում, իսկ Ա երկիրը՝ արտադրելով Q կետում, կսպառի C-ում (գծ. 2): Նման իրավիճակում միջազգային շուկան չի կարող հավասարակշռվել, քանի որ առկա է x -ի շբավարարված պահանջարկ և y -ի ավելցուկային առաջարկ:

Գծանկար 4

Առևտուրը երկու միանման երկրների միջև, երբ երկրներից մեկում սահմանված է սպառման հարկ կամ լրավճար



Միջազգային հարաբերական գինը պետք է փոխվի այնպես, որ առաջարկն ու պահանջարկը հավասարվեն: Մասնավորապես, x -ի հարաբերական գինը պետք է բարձրանա:

Արդյունքը պատկերված է գծ. 4-ում: Վերջնական հավասարակշռությունում երկու երկրներն էլ արտադրում են միևնույն M կետում, քանի որ երկրները միանման են, և միջազգային հարաբերական գինը երկուսի համար էլ նույնն է: F երկիրը սպառում է C_F կետում, U երկիրը՝ C_U կետում: Մեկի արտահանումը հավասար է մյուսի ներմուծմանը:

Այսպիսով՝ U երկիրը հարկ սահմանելու (լրավճար տրամադրելու) միջոցով **ստեղծեց, ավելացրեց, բայց այդ առևտրից իր բարեկեցությունը նվազեց**: Այնինչ F երկիրը հայտնվեց ավելի բարենպաստ վիճակում:

Այժմ կատարենք հետևյալ հարցադրումը: Ենթադրենք՝ երկրում առկա են երկու աղճատումներ. (1) առևտուրն ազատ չէ ու (2) կիրառվում են հարկեր և կամ լրավճարներ: Արդյո՞ք երկիրը կշահի, եթե ազատականացնի առևտուրը: Այսինքն՝ երկիրը կշահի՞, եթե վերացնի մի աղճատումը՝ պահպանելով մյուսը:

Այս հարցադրումը համարժեք է հետևյալին: Արդյոք գծ. 1-ի E կետի համեմատ գծ. 2-ի C կետում կամ գծ. 4-ի C_U կետում բարեկեցությունն ավելի բարձր, թե ցածր է: Մեր պատկերած տարբերակներում երկու դեպքում էլ բարեկեցությունն ավելի ցածր է: Թեպետ դա պարտադիր չէ. հնարավոր է, որ ավելի բարձր լինի: Ընդհանուր դեպքում, առևտրի ազատականացումն առկա աղճատման պայմաններում կարող է բարելավել կամ վատթարացնել երկրի բարեկեցությունը:

Սա հանրահայտ «երկրորդ լավագույնի տեսության» կիրառությունն է: Մի աղճատման (առևտրի արգելի) վերացումը, երբ առկա է մեկ այլ աղճատում (հարկեր կամ լրավճարներ), անհրաժեշտաբար չի բարելավում երկրի բարեկեցությունը:


Այժմ համարենք՝ U երկիրը սահմանում է y -ի արտադրության հարկ (կամ x -ի արտադրության լրավճար):

Սկզբնական վիճակը ցույց է տրված գծ. 3-ում: F երկիրն արտադրում և սպառում է Q կետում, U երկիրն արտադրում է M կետում, սպառում է C -ում: Դարձյալ միջազգային շուկան հավասարակշռված չէ, քանի որ առկա է x -ի ավելցուկային առաջարկ և y -ի չբավարարված պահանջարկ: Միջազգային հարաբերական գինը պետք է փոխվի այնպես, որ F երկիրն արտահանի y , ներմուծի x (գծ. 5): Վերջնարդյունքում F երկիրը կարտադրի L կետում, կսպառի C_F -ում, U երկիրը կարտադրի K կետում, կսպառի C_U -ում:

Դարձյալ՝ արտադրության հարկը (լրավճարը) պայմանավորեց առևտուր, բայց այդ առևտուրը չբարելավեց U -ի բարեկեցությունը, թեպետ F -ն, ինչպես նախորդ դեպքում, շահեց:

Գծանկար 5

Առևտուրը երկու միանման երկրների միջև, երբ երկրներից մեկում սահմանված է արտադրության հարկ կամ լրավճար



Այսպիսով՝ գծ. 4-ում և 5-ում և՛ արտադրության, և՛ սպառման հարկերը (կամ լրավճարները) սահմանված են միևնույն y ապրանքի համար: Սակայն առևտրի վրա ազդեցությունը հակադարձ է: y -ի սպառման հարկը կրճատում է y -ի տեղական սպառումը և հետևաբար՝ նպաստում է y -ի արտահանման աճին: Իսկ y -ի արտադրության հարկը կրճատում է y -ի տեղական արտադրությունը և հետևաբար՝ նպաստում է y -ի ներմուծման աճին:

Ռեսուրսների շուկայի աղճատում

Ռեսուրսների հարկման ազդեցությունը նշանակալիորեն տարբեր է ապրանքների հարկման ազդեցությունից: Ռեսուրսների շուկայի աղճատման կոնկրետ տարբերակը, որը կդիտարկենք, շահութահարկն է:

Համարենք՝ ունենք Հեքշեր-Օհլին բնույթի $2 \times 2 \times 2$ մոդել և y -ի արտադրությունում կապիտալի եկամտի վրա սահմանվում է հարկ:

x -ի արտադրությունում կապիտալի վճարը կազմում է r , y -ի արտադրությունում՝ $r(1+t)$, որտեղ t -ն հարկի դրույքն է: Ռեսուրսների հարաբերական գինը արտադրության երկու ճյուղերի համար կլինի.


$$(9) \quad \left[\frac{w}{r} \right]_x > \left[\frac{w}{r(1+t)} \right]_y$$

Գծ. 6 ցույց է տալիս ռեսուրսների բաշխումը էջվորթ-Բոուլի արկղում: Q սկզբնական հավասարակշռության կետն է, որում $[w/r]_x = [w/r]_y$:

Հարկի սահմանումից հետո նոր հավասարակշռությունը հաստատվում է G կետում, որում $[w/r]_x > [w/r(1+t)]_y$ (հիշենք, որ օպտիմալ կետում ռեսուրսի հարաբերական գինը հավասար է իզոքվանտի թեքությանը): O_xGO_y կորի բոլոր կետերում իզոքվանտների թեքության տարբերությունն այնպիսին է, ինչպես G կետում: O_xGO_y կորը կանվանենք ռեսուրսների բաշխման աղճատված կոր՝ ի տարբերություն O_xQO_y կորի, որը ռեսուրսների բաշխման արդյունավետ կորն է:


G կետում ռեսուրսների բաշխումը Պարետո օպտիմալ չէ: Հետևաբար՝ այդ կետին համապատասխանող արտադրությունը չի գտնվի արտադրական հնարավորությունների արդյունավետ սահմանի վրա:

Գծանկար 6
Ռեսուրսների բաշխումը, երբ մի ճյուղում մի ռեսուրսի եկամուտը հարկվում է



Փժանկար 7

Արտադրական հնարավորությունների աղճատված սահմանը և ավտարկիչի հավասարակշռությունը ռեսուրսի հարկման դեպքում



Փժ. 7-ում պատկերված են համապատասխան արտադրական հնարավորությունների սահմանները: $O_x G O_y$ -ին գժ. 7-ում համապատասխանում է արտադրական հնարավորությունների FGF աղճատված սահմանը, իսկ $O_x Q O_y$ -ին FQF արդյունավետ սահմանը: Ռեսուրսի հարկման հետևանքով արտադրական հնարավորությունների սահմանը կրճատվում է (գժ. 7-ի G կետը համապատասխանում է գժ. 6-ի G կետին):

Փժ. 7-ում G կետը հավասարակշիռ կետ չէ: Արտադրական հնարավորությունների աղճատված սահմանի թեքման անկյունը G կետում հավասար է y -ի արտադրության «իրական» ալլընտրանքային ծախսին, այսինքն՝ «իրական» սահմանային ծախսերի հարաբերությանը: Բայց y -ի արտադրության «մասնավոր» սահմանային ծախսն ավելին է, քան «իրական» սահմանային ծախսը, քանի որ y -ի արտադրողները պետք է վճարեն կապիտալի հարկ: x -ի արտադրության «իրական» և «մասնավոր» սահմանային ծախսերը նույնն են, քանի որ x -ի արտադրությունում հարկ չկա:

Արտադրական հնարավորությունների աղճատված սահմանի ձևափոխման սահմանային գործակիցը նշանակենք MRT_d , «մասնավոր» սահմանային ծախսը՝ MC , «իրական» սահմանային ծախսը՝ MC^* : Քանի որ $MC_x^* = MC_x$ և $MC_y^* < MC_y$, ապա y -ի արտադրությունում կապիտալի հարկի հետևանքով ունենք.

$$(10) \quad MRT_d = \frac{MC_x^*}{MC_y^*} > \frac{MC_x}{MC_y} = \frac{p_x}{p_y}$$

Այն, որ հավասարակշռության կետում արտադրական հնարավորությունների աղճատված սահմանի թեքությունը՝ MRT_d , հավասար չէ ապրանքների հարաբերական գնին՝ p_x/p_y , կարող ենք ցույց տալ հետևյալ կերպ: Ունենք $y = g(L_y, K_y)$, $x = f(L_x, K_x)$, որտեղ օրինակ՝ L_y y -ի արտադրությունում օգտագործվող աշխատանքի, իսկ K_y կապիտալի քանակներն են:

$$(11) \quad \frac{dy}{dx} = \frac{g_L dL_y + g_K dK_y}{f_L dL_x + f_K dK_x} = - \frac{g_L dL_x + g_K dK_x}{f_L dL_x + f_K dK_x}$$

$dL_y = -dL_x$, $dK_y = -dK_x$ քանի որ լրիվ զբաղվածության դեպքում մի ապրանքի արտադրությունում մի ռեսուրսի հավելածը հնարավոր է մյուս ապրանքի արտադրությունում այդ ռեսուրսի կիրառումը նույնքանով կրճատելու դեպքում:

Ձևափոխությունների միջոցով ստանում ենք.

$$(12) \quad MRT_d \equiv -\frac{dy}{dx} = \frac{p_x}{p_y} \left[\frac{\frac{w}{p_y g_L} dL_x + \frac{r(1+t)}{p_y g_K} dK_x}{\frac{p_x f_L}{w} dL_x + \frac{p_x f_K}{r} dK_x} \right] = \frac{p_x}{p_y} \left[\frac{w + r(1+t) \frac{dK_x}{dL_x}}{w + r \frac{dK_x}{dL_x}} \right] > \frac{p_x}{p_y}$$

Օրինակ՝ $p_y g_L$ y -ի արտադրությունում աշխատանք ռեսուրսի սահմանային արդյունքի արժեքն է:

Կատարյալ մրցակցային շուկայում «մասնավոր» սահմանային ծախսերի հարաբերությունը հավասար է ապրանքների գների հարաբերությանը: Ընդ որում, արտադրողի գների հարաբերությունը հավասար է սպառողի գների հարաբերությանը, երբ թողարկման (ոչ թե ռեսուրսների) վրա հարկեր չկան:

Հվ. 12-ից հետևում է, որ $MRT_d > p_x/p_y$, որտեղ p_x/p_y -ը արտադրողի գների հարաբերությունն է: Վերջինը հավասար է սպառողի գներին հարաբերությանը, քանի որ մեր կողմից դիտարկվող հարկը սահմանված է ռեսուրսի եկամտի, ոչ թե թողարկման վրա:

Հետևաբար՝ գծ. 7-ում վերջնական հավասարակշռությունը պետք է հաստատվի այնպիսի կետում, որը բավարարում է $MRT_d > p_x/p_y$ պայմանին: Այդպիսին է C կետը, որում արտադրողի (սպառողի) հարաբերական գնի ուղիղը շոշափում է հասարակության անտարբերության կորին:

Այսպիսով՝ ռեսուրսի վրա հարկի դեպքում ի հայտ են գալիս երկու աղճատումներ.


- արտադրական հնարավորությունների սահմանը կրճատվում է,
- հավասարակշռության կետում արտադրողի հարաբերական գինը չի շոշափում արտադրական հնարավորությունների սահմանը:

Գծ. 8 պատկերում է կապիտալի հարկի ազդեցությունը համաշխարհային առևտրի հավասարակշռության վրա: Ավտարկիայի սկզբնական հավասարակշռությունը երկու երկրներում Q կետում է:

Երբ U երկիրը սահմանում է հարկ կապիտալի վրա, ինչպես նկարագրված է գծ. 7-ում, ավտարկիայի հավասարակշռությունը տեղափոխվում է C կետ և U երկիրն արտադրում ու սպառում է այդ կետում: Հարկի հետևանքով y -ի արտադրությունը կրճատվում է, ուստի՝ y -ի գինը U երկրում բարձրանում է:

Գծանկար 8

Առևտուրը երկու միանման երկրների միջև, երբ U երկրում սահմանված է կապիտալի հարկ



Արդյունքում՝ x -ի հարաբերական գինը Բ-ում ավելի բարձր է, քան U -ում, ինչը ստեղծում է փոխշահավետ առևտրի հնարավորություն. U երկիրը կշահի, եթե արտահանի x և ներմուծի y :

Համաշխարհային շուկայում ձևավորվում է նոր հավասարակշռություն, այնպիսին, որ x -ի միջազգային գինն ավելի բարձր է, քան Ա-ում ավտարկիայի գինն էր, բայց ավելի ցածր է, քան Բ-ում ավտարկիայի գինն էր:

Բ երկիրը շահում է գնի այս փոփոխությունից: Բ մասնագիտանում է y -ի արտադրությունում և արտադրությունը տեղաշարժում է L կետ (գծ. 8): Արդյունքում՝ Բ երկիրն Ա է արտահանում y , ներմուծում է x ու սպառում է C_B կետում: Համապատասխանորեն՝ Ա երկրի արտադրությունը տեղաշարժվում է K կետ, իսկ սպառումը՝ C_A կետ: Ա երկիրն ակնհայտորեն տուժում է՝ չաղճատված ավտարկիայի (և ազատ առևտրի) հավասարակշռության՝ Q կետի համեմատ:

Այսպիսով՝ ռեսուրսի հարկումը կարող է պայմանավորել առևտուր, սակայն այդ առևտուրը բարեկեցությունը չի բարձրացնում: